

**ՀԱԿՈՒՑ ՕՇԱԿԱՆԻ ՓՈՔԸ ԱՐՁԱԿԸ՝ ԲԱՐՔԵՐԻ ՈՒ
ՍՈՎՈՐՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԿԵՐ**

ՄԱՐԻՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ

Միյուռքահայ գրողները, պատկերելով իրենց կորցրած ծննդավայրն ու նրա մարդկանց, ներկայացնելով կենցաղն ու բարքերը, նպատակ ունեին օտար երկնքի տակ ապրող հայրենակիցների սրտում բորբոք պահելու հայրենի տան հիշատակները, իրենց սերն ու կարոտը, վերադարձի հույսը, իսկ գալիք սերունդների համար կենդանագրել կորսված հայրենիքի պատկերը և այն վերադարձնելու հավատն ու ձգտումը: Այդ նպատակին յուրաքանչյուր գրող իր երկերում հասավ իրեն բնորոշ գեղարվեստական ձևերով ու միջոցներով:

Հակոբ Օշականն իր պատմվածքներով, «հեքիաթներով» և «ծանր վեպերով» ամենից առաջ մոռացումից փրկեց իր ծննդավայր հայոց գյուղը: Թեև Օշականի պատկերած գյուղը Արևմտահայաստանի գյուղը չէր¹, այն «հայրենիքի (Արևմտյան Հայաստանի) գյուղից շատ բաներով տարբեր էր՝ պայմանավորված թուրք միջավայրի ազդեցությամբ բարքերի փոփոխություններով», բայց «գրողը լրացնում, ամբողջացնում էր ընդհանրապես Թուրքիո մեջ ապրող հայ գյուղացիության պատկերը»²:

Հայ գյուղն իր կենցաղով, վարք ու բարքով, հոգեկան և բարոյական աշխարհով դարձավ Օշականի գրականության առանցքը: Օշականը լավ ուսումնասիրել, ճանաչել ու սիրել է հայ գյուղը, հայ գյուղացուն, և նրա նպատակը հայ գյուղաշխարհի ու նրա մարդկանց պատկերումն է, այդ աշխարհի բարքերի վերհանումը: Նրա գեղագիտական հայացքների համակարգում սա կարևոր խնդիրներից է. «Բարքերուն հանդէպ անոր զգացածը տառացի տարփանք մըն է, պաշտամունք մը գրեթէ»³, - ասում է Օշականը հենց իր մասին: Գրելով, որ «Խոնարհները» շարքը աչքի է ընկնում **«բարքերէ իր նիհարությամբ»** Օշականը ավելացնում է, որ շարքի յուրաքանչյուր հերոսի կյանքի ամեն մի գիծը առնված է գյուղի ընդհանուր բարքերից⁴: Անդրադառնալով Օշականի ստեղծագործության այս առանձնահատկությանը՝ Կ. Աղաբեկյանը

¹ Օշականը (Հակոբ Քյուֆեճյան) ծնվել և կյանքի 28 տարին ապրել է Թուրքիայի Նիկիո գավառում, պատկերել է այդ գավառի հայ գյուղերում (նաև Բուրսա քաղաքում) ապրող մարդկանց կյանքը:

² **Վազգեն Գաբրիելյան**, Միյուռքահայ գրականություն, Եր., 2008, էջ 59:

³ **Յ. Օշական**, Համապատկեր արեւմտահայ գրականութեան, հ. 10, Անթիլիաս, 1982, էջ 149:

⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 110:

գրում է. «Պատմվածքների սյուժեները զարգանում են ո՛չ միայն բարքերի ուղեկցությամբ կամ հարևանցի նկարագրությամբ, այլև ուղղակի դրանց տիրական ազդեցությամբ»⁵: Վ. Գաբրիելյանը ընդլայնում է խնդրի սահմանները՝ գրելով. «Այդ հերոսների կյանքի առօրյա պատմությունների ու հոգեկան թաքուն ապրումների միջոցով Օշականը պատկերում է նաև բարքեր, սովորություններ, փորձելով հայտնաբերել ոչ միայն մարդկայինը, այլև այն, որ «հայեցի» է, «հայ հոգին» է»⁶: Գրականագետն այն կարծիքին է, որ Օշականը իր «Համապատկերը» ստեղծելիս առաջնորդվել է նույն մղումով՝ «պատմել արդեն անցյալ կորուսյալ կյանքի՝ բարքերի ու հայ ոգու մասին, իր ժողովրդի ստեղծած արժեքների մասին»⁷: «Պաշտամունք և արտահայտություն հայ հոգվույն»⁸ դրույթը, որ մեհյանականների⁹ առաջնային սկզբունքն էր, և որը պետք է պահպաներ յուրաքանչյուր հայ գրող, շարունակում է կարևորվել նաև հետեղեռնյան տարիների պոլսահայ, ապա և սփյուռքյան գրականության մեջ:

Եվ ահա, Օշականի յուրաքանչյուր պատմվածքը՝ իր ուրույն շեշտով ու գունագեղությամբ, դարձավ իր գյուղի բնաշխարհի, սովորույթների ու բարքերի մի կենդանի պատկեր, իսկ դրանց ամբողջությունը՝ գյուղի համապատկերը: Այս խնդիրը Օշականը հաջողությամբ կյանքի կոչեց նաև «ծանր վեպեր»-ում, որոնցում «...Վիպասանը կորուստե փրկած է նաև մեր քաղաքը՝ ուր այնքան հարուստ ենթահող մը կայ բարքերու (Պոլիսը, Գահիրեն, եւ այլն...)»¹⁰:

Օշականի արձակը հայ նահապետական գյուղի կյանքի, տոների ու ծիսակատարությունների, բարքերի ու սովորությունների համապատկեր է: Այս ամենը Օշականը ի ցույց է դնում ոչ թե սուկ նկարագրությունների միջոցով, այլ հերոսների հոգեբանական բացահայտումների համադրությամբ: Հակառակ դեպքում նա կհամարվեր բանահավաք կամ ազգագրագետ: «Օշական գրել սկսած է ոչ իբր բարքերու հավաքիչ մը (Պերճ Պոռոշեանց, Շիրվանզատե), այլ՝ իբրեւ արուեստագետ մը, որ մարդկային տրաման միայն ունի փառասիրութեան զսպանակ, ինչպէս յանգումի կէտ»¹¹: Եվ այդ «մարդկային տրամա»-յի բացահայտումներն էլ Օշականը իրականացրեց արվեստագետի՝ իրեն բնորոշ գեղարվեստական միջոցներով:

⁵ Կիմ Աղաբեկյան, Հակոբ Օշական, Եր., 2006, էջ 71:

⁶ Վազգեն Գաբրիելյան, նշվ. աշխ., էջ 55:

⁷ Նույն տեղում, էջ 63:

⁸ Լ. Մնացականյան, Գրական քննադատությունը «Նավասարդ» և «Մեհյան» պարբերականներում, Եր., 1988, էջ 16:

⁹ Խոսրո «Մեհյան» ամսագրի (1914 թ.) խմբագիր-հեղինակների մասին է (Կ. Զարյան, Դ. Վարուժան, Հ. Քյուֆեճյան (Օշական), Ա. Տատուրյան և այլք):

¹⁰ Շուշիկ Տասնապետեան, Յակոբ Օշականի վեպը, Պեյրուֆ, 1994, էջ 35:

¹¹ Յ. Օշական, նշվ. աշխ., էջ 110:

Օշականն իր հերոսների մեջ պատկերեց հայի բնավորության բնորոշ գծերը՝ դրանցում ընդգծելով հատկապես ապագայի նկատմամբ աներեր հավատը՝ ապրել՝ հայացքը ապագայի լույսին հառած: Կերտեց կենդանի և բնական կերպարներ, որոնք հիմնականում նրան ծանոթ, իրական մարդիկ էին: Նա գեղարվեստական ընկալումների իր յուրահատկությամբ վարպետորեն ցույց տվեց այդ մարդկանց հոգեկան աշխարհը, որն ինչ-որ չափով նաև Օշականի ներաշխարհն էր: Այդ աշխարհը նախ և առաջ մեր առջև բացվեց գյուղացի մանկան պարզ ու անմեղ երագներով, սերերով, անընդհատ մի լավ բանի սպասումով, մի կտոր հացի համար պայքարով, հարուստների Կադանդի նման Կադանդ ունենալու, խեղճությանը չհամակերպվելու ձգտումով, Աստծուն ուղղված մանկան բողոքով, որոնցից էլ հետագայում ծնվեց Օշական գրողը, քննադատը:

Օշականի փոքր արձակը նույնպես («Խոնարհները», «Խորհուրդներու մեհեանը», «Երբ պատանի են», «Կայսերական յաղթերգութիւն», «Հինէն ու նորէն», «Երբ պզտիկ են» գրքերն ու շարքերը) հայ գյուղի կյանքը ներկայացնող մեր գրականության լավագույն էջերից է:

Օշականի հերոսները կոնկրետ ժամանակի մեջ ապրած մարդիկ են, բայց նրանք իրենց հոգեբանությամբ կարող են համարվել բոլոր ժամանակների հարազատ մարդիկ: «Բայց նրա արվեստն ունի մի զարմանալի առանձնահատկություն, որի շնորհիվ պատմվածքները ճեղքում են այդ կոնկրետ ժամանակի տարածքը և ձեռք բերում «յաւերժական ժամանակի» մեջ մտնելու անձնագիր»¹²: Իսկապես, բոլոր ժամանակներում էլ եղել են այս կամ այն մարդու կողմից խաբված մաղաքներ, աղբարիկներ, արթիններ, աղքատության մեջ տվայտող գոլոներ, ստեփաններ, բեկված ճակատագրերով սողմեններ, եվաներ, իրենց կյանքը փոխել ցանկացող պաղտոներ, տոգսաններ, ավանդության ուժին դիմադրել չկարողացող վարդաններ, որոնք գալիս են ժամանակի խորքերից և գնում են դեպի հեռուներ:

Օշականի հերոսները հասարակ գյուղացիներ են՝ հողագործներ, այգեգործներ, որսորդներ, հովիվներ, տարբեր զբաղմունքի տեր մարդիկ, որոնք բոլորն էլ աշխատում և վաստակում են սեփական քրտինքով:

Գյուղացիների գործերը տարբեր էին, բայց ցավն ընդհանուր էր. «Հացին ցավը ամենուն լեզվին վրա կըլլա միշտ»¹³: Տարեցտարի պակասող բերքը անհանգստացնում և մտածմունքի տեղիք էր տալիս բոլորին: «Մտմտուք, որքա՛ն կուզես սա մերեթ գեղին մեջ, հայու գեղ մտիք, ամեն բան թաղված պիտի գտնես մոռյլ մտմտուքի մը մեջ»¹⁴: Մի խոսքով, գյուղը կքած էր հոգսերի տակ՝ միննույն ժամանակ անընդհատ զգալով չերքեգ, ալբանացի և թուրք թալանչիների շունչը:

¹² Կիմ Աղաբեկյան, նշվ. աշխ., էջ 71:

¹³ Հակոբ Օշական, Երկեր, Եր., 1979, էջ 55:

¹⁴ Նույն տեղում, էջ 52:

(«Տոպիճը», «Համարը», «Պաղտոն», «Գոլոն», «Շահպագ»): Այս տանջող ցավն ու մտմտութիւնն էլ միգուցե պատճառ են դառնում, որ մտերմիկ, բայց անտեսանելի մի կապ միմյանց կապեր գյուղացիներին, հատկապէս երեխաներին:

Աղքատ ու որբ տղաները ստիպված էին սեփական աշխատանքով հաց վաստակել: Գյուղը որբերի նկատմամբ ներողամիտ էր մինչև «երկրորդ ակոսները բուսնին»: Դրանից հետո որբը պարտավոր էր աշխատել: Գյուղի հանրությունը պէքեր (օտար տներում վարձու աշխատող) էր դարձնում «ջեն ու կարող» բնավորությամբ տղաներին, իսկ «պէքեր ըլլալու արժանիքն ունեցող մը փրկված է սատկելէ» (**«Տոգասնը»**):

Տղաների հիմնական զբաղմունք-պարտականությունը հովվությունն էր: Հովիվ կնքվում էին պաշտոնապէս: Պաշտոնական հովիվները կապում էին կարմիր գոտի, հագնում պաշտոնական տրեխ, «սեպիական սիլահլըզ» և, հակառակ դեռևս չձեռնադրված հովիվների, թևատակին առնում կաշվե տոպրակ: Շունը, մահակն ու «կապ դանակն» էլ անպակաս պետք է լինեին նրանցից:

Հովվությունը գյուղացիների համար սովորական զբաղմունք չէր, այլ կոչում, պաշտոն, որին արժանանալը մեծ պատիվ էր: Այդ «պաշտոնն» ուներ իր կարևոր նախապայմանները: Այս նպատակով էլ հովիվներին վարժեցնում էին մանկուց: Ուստի «պգտիկ հովիվների» օրն անցնում էր հայրերի՝ «մեծ հովիվների» կողքին:

Հովիվները մեծ հոգատարություն և սրտացավ վերաբերմունք ունեին հոտի նկատմամբ: Մա գուցե պայմանավորված էր այն հանգամանքով, որ դա նրանց սեփական հոտն էր, և սիրելի ու թանկ էր յուրաքանչյուր այծ, յուրաքանչյուր ոչխար: Մա էլ պայմանավորում էր «պաշտոնի» անցումը հորից որդուն: Որդին էլ մեծ ոգևորությամբ էր ստանձնում այն՝ հոր «երեսը ճերմակ» դարձնելու պայմանով:

Հովիվները գարնանը՝ Չատկի տոնից հետո, բարձրանում էին սարերը և ուշ աշնանը իջնում սարերից: Հովվության այս ձևը ավելի պատվաբեր էր: Ամառ-ձմեռ հոտից չբաժանվող տղաներն իրենց արժանիքներով զիջում էին որոշակի ժամկետով հովվություն անողներին: Կանայք շահագրգռված չէին նրանց աղջիկ տալու: Նրանք կարծում էին, որ շարունակ լեռներում ապրող տղաները կորցնում են նույնիսկ խոսելու ունակությունը (**«Թուրքսենին աղջիկը», «Հին պատմություն», «Համբույրի մը պատմությունը»**):

Ոչ միայն հովվությունը, այլև յուրաքանչյուր աշխատանք ուներ իր շրջանը: Սովորաբար մայիս ամիսը գյուղացու ծանր աշխատանքի, դրանով հանդերձ ծայրահեղ աղքատության շրջանն էր: Վաշխատուները Չատկի տոնից հետո հրաժարվում էին գյուղացիներին պարտքով դրամ տալուց: Ամբարները դատարկվում էին, և գյուղացիների մեծ մասն ապրում էր ձկնով:

Մայիսը նաև շերամապահության շրջանն էր: Գյուղում համընդհանուր խրախճանք էր շերամի համար նախապատրաստվելը: Օշականն այնպես մանրամասն է նկարագրում շերամապահության գործընթացը, որ կարելի է վերականգնել շերամապահության արվեստը, իմանալ նրա գաղտնիքները. «Ձայնը (շերամի-Մ. Ղ.) որքան բարակ ըլլա, շերամն այնքան առողջ կըլլա»¹⁵:

Հարսանիքները նույնպես ունեին իրենց շրջանը: Դրանք սկսվում էին գարնանը, ավարտվում աշնանը՝ մինչև «ինկնող ձյունը»: Կենդանի պատկերներ են նաև հարսանիքների նկարագրությունները: Օշականը, մասնակիցը լինելով իր գյուղի հարսանիքներին և տոնախմբություններին, ընթերցողներին ևս դարձնում է դրանց ակնդիրն ու ունկնդիրը (**«Հորքուր Վարդան»**):

Գյուղի ահելներն ու ջահելները տարբերվում էին որոշակի հագուստով (չուխա, ֆես, չեմպեր և այլն): Հագուստը կարող էր նաև ընտրած կամ սիրած զբաղմունքի վկայություն լինել: Այն նաև որոշակի կարգավիճակի նշան էր: Ընդունված կարգի համաձայն, երբ տղան դառնում էր տասնհինգ տարեկան, նա արդեն փեսացու էր համարվում. ուներ իր նշանածը, ուստի պարտադիր պետք է կարմիր գոտի ունենար, գլխին՝ սրածայր գլխարկ, ոտքերին՝ գուլպա՝ կապիչներով: Նշանված տղաներն էլ յուրահատուկ խանդավառությամբ էին հագնում կարմիր գոտի, անութի տակ սեղմած պահում «ճերմակ, նրբամարմին ճիւղ մը» և հպարտ քայլերով անցնում աղջիկների հիմնական հավաքատեղի համարվող աղբյուրի մոտով (**«Միրածներէս»**):

Մինչև նշանվելը աղջնակները վազվզում էին ոտաբոբիկ, սակայն նշանվելուց հետո տնից մի քիչ հեռանալու կամ գյուղից դուրս գալու դեպքում նրանց պարտադրում էին հագնել փայլփլուն կոշիկ ու նոսն գույնի գուլպա: Սրան ավելանում էին այլ արգելքներ ու պահանջներ, որոնք, փաստորեն, մանկամարդ աղջիկներին զրկում էին իրենց այնքան քաղցր ոսկեծամ մանկությունից:

Եթե մեր օրերում աղջկա նշանված լինելը պարզվում է մատնեմատին անցկացված մատանուց, ապա այդ ժամանակ աղջկա «ձեռքերուն անցկացված հիլալ»-ը և պարանոցի ոսկին նշան էին «մասնավոր տղու մը սեփականության»: Նշանը սովորաբար երջանկության խորհուրդ ուներ: Իսկ երբեմն, եթե աղջկան ինչ-ինչ պատճառներով սահմանված չէր ամուսնանալ, մահվան նման չարագուշակ էր (**«Խենթ-Սողմեն»**):

Գյուղի տղաներն ու աղջիկները վախենում էին միմյանց սիրել, որովհետև ծնողների միջև վաղուց կնքված համաձայնությունը շատ հաճախ ի դերն էր հանում նրանց սերն ու հույսերը: Շատ անգամ երիտասարդներն ամուսնական առազաստ էին մտնում՝ առանց կողակցին ճանաչելու: Պատահում էր, որ ծնողների նախաձեռնությամբ իրար

¹⁵ Նույն տեղում, էջ 57:

միացող սրտերն այդպես էլ չէին կապվում միմյանց և ամբողջ կյանքում տանջվում էին իրենց սրտում բույն դրած զգացմունքի պատճառով: Բայց կային աղջիկներ, որոնք գերադասում էին «հատցնել սիրտն ու սերը: Մեղքին հետ իջնալ վար ու չըլլալ, չըլլալ...»¹⁶, քան ապրել՝ առանց ճաշակելու սիրո բերկրանքը: Հավերժական մուր էր քսվում այդ տան ճակատին, ծայր էր առնում «հարալեզու ծեր բամբասանքը»: Իսկ եթե հարս գնացած աղջիկը անարատ էր, դարձ գնալիս մայրը նրան դիմավորում էր մեծ հպարտությամբ՝ մեջքին ոսկեճամուկ գոտի կապած (*«Դարձը», «Շահպագ», «Խենթ-Սողմեն», «Աղցանք»*):

Գյուղն ապրում էր՝ սերն ու մեղքը, գաղտնիքն ու ավանդությունը գրկած: Բարքերն ու սովորույթները ձևավորում էին մարդկանց վարքագիծը, ստեղծում հասարակության կողմից ընդունելի արժեհամակարգ, որը աղճատողները վճարում էին իրենց կյանքով: «Գեղին պատմությունը աստանկ զարտուղություններ ունի», որոնք հիմնականում ավարտվում էին մեղապարտ աղջիկների ինքնասպանությամբ: Իսկ դժբախտ պատահարներն ու բեկված ճակատագրերով հարսները գյուղում շատ էին: Նրանց կյանքն ավարտվում էր ծովի ջրերում կամ «չուանի ծայրին, տանը մեծ գերանն ի վար»¹⁷: Հայ առաքելական եկեղեցու օրենքների համաձայն՝ ինքնասպանների հոգին հանգիստ չուներ: Գյուղում նույնիսկ արգելում էին ինքնասպանների՝ «մեղքին յայտարար նշան, իրենց մարմինը» ամփոփելու ընդհանուր գերեզմանոցում: Նրանք վոնդված էին «մայր գերեզմանին խաղաղ փառքեն»: Գյուղը կարծում էր, որ բոլոր այդ լույս աղջիկները խաբվել էին սատանայի կամ չար ոգիների կողմից: Մա էր գուցե պատճառը, որ գյուղացին հարգանքով էր վերաբերվում իր խենթերին, որովհետև նրանց մեջ տեսնում էր վերին ուժերի կամքն ու ազդեցությունը (*«Խենթ-Սողմեն», «Չուանները», «Հին պատմություն»*):

Ծերերի հիմնական հավաքատեղին որևէ աղբյուրի կամ եկեղեցու բակն էր, որը ձմռանը զիջում էին որսորդներին: Այլևս անկարող աշխատելու՝ նրանք հիմնականում զբաղվում էին տուզ ու ճատրակ խաղալով: Այդ մարդկանց միջև ծավալվող կարճատև խոսակցությունները բացահայտում են գյուղացիների հոգեբանությունը, նրանց հարաբերությունները: Գյուղում քահանան մեծ հեղինակություն վայելող անձ էր: Նրա ասածն օրենք էր: Ոչ ոք, բացի հարուստ ծերերից, որոնք սովորաբար «հաստատուն ձայն ու հպարտ շեշտ ունեին», չէր համարձակվում առարկել նրան: Հարուստները վիճում էին, «փորերնին տափկըցած աղքատիկ տէտեները միշտ հետեւակ են»¹⁸ և համաձայնում էին նրանց հետ, նույնիսկ չէին դժգոհում, երբ ընդհատում էին իրենց ա-

¹⁶ Յակոբ Օջական, Երկեր, Անթիլիաս-Լիբանան, 1998, էջ 541:

¹⁷ Յակոբ Օջական, Գայսերական յարթերգություն, Պէրյուք, 1983, էջ 64:

¹⁸ Յակոբ Օջական, Խոնարհները, Պէրյուք, 1958, էջ 153:

ռանց ընդունված խոսքի՝ «Խօսքդ մեղրով կոտրեմ»¹⁹ (**«Տոսիճը», «Շահպագ», «Թուրքսենին աղջիկը»**):

Ծերերից անբաժան էին իրար շարունակ հրմշտող, տեղի համար միմյանց հետ վիճող մանուկները և, Օշականի բնորոշումով, քոքուրները՝ «աշխարհքը նեղ գտնող այդ խեղճերը», գյուղի՝ աշխատանքից խուսափող կես խելոք, կես խենթերը, «...որոնք պակաս տախտակով կը ծնին ու կապրին այդ պակասին ծանր հակազդեցութեանը տակ»²⁰: Նրանց «ցավերի ցավը» կինն էր, այն էակը, որի համար ընդունակ էր ընդվզելու քոքուրի խեղճ ու մենավոր հոգին: Քոքուրները ո՛չ ապուշ էին, ո՛չ խենթ: Նրանք այդպիսին էին դարձել «արկած մը, որբութիւն մը, մանկութեան տարիներուն խոշոր խռովք մը»²¹ ապրելու պատճառով: Բայց գյուղացին բարի էր այն քոքուրների նկատմամբ, ովքեր ընդունակ էին որևէ գործ անելու, եթե նա «անոնց մեջ տեսնէ տոկուն դնդերներ, շէն ու կարող բնավորություն»²² (**«Պաղտո», «Համարը»**):

Կյանքում միակ բանը, որը չի զանազանում հարուստին ու աղքատին, մահն է. «Տղաքերքը միշտ գերեզմանին հետ կը շփոթուի բոլոր մայրերուն մտքին»²³: Այդ համընդհանուր ցավի մեջ երևում են նաև «Նարեկի» զորությամբ փրկված թե՛ հարուստ, թե՛ աղքատ կանայք: Եթե հարուստները հնարավորություն ունեին ստանալու բժշկի օգնությունը, ապա «Նարեկը» աղքատ թաղի ու գյուղի բժիշկն էր՝ «ձրի, զօրաւոր» (**«Նարեկը», «Պատավին անէծքը»**):

Գյուղացիների մեջ ամուր նստած էր հավատը Աստծո և եկեղեցու նկատմամբ. «Առանց Աստրծո տերև կը շարժի»: Մի անխախտ և սուրբ սովորություն էր տոն օրերին Սուրբի գնալիս գյուղի հարևանությամբ գտնվող սուրբ հարթավայրում հավաքվելը: Ժողովուրդն ամեն կիրակի ժամ էր գնում: Բայց ինչպես հիմա, այն ժամանակ ևս հայը եկեղեցի էր գնում անցավորների հիշատակը սրտում, «գերեզմանին հեռաւոր մեռելներուն տուած միտքը»²⁴ (**«Շահպագ», «Չատիկ», «Աղբարիկը»**):

Գյուղի եկեղեցին իր բազում խորհրդավոր խորհուրդներով և հրաշագործ մասունքներով, համարվում էր գյուղի զարդը: Գյուղացիների աչքում այն շատ ավելի գեղեցիկ ու զորավոր էր, քան քաղաքի որևէ եկեղեցի: Այդ եկեղեցու դռնից արու զավակի լույս աշխարհ գալը ազդարարող բազում ավետիսներ են լսվել, որի ժամանակ աղքատներին բաժանվել է հաց, ձեթ, ձավար, իսկ կնունքից հետո՝ կաթով հալվա (**«Լուսատուն», «Մատնագել Եվա»**):

Գյուղը կուրորեն հետևում էր ավանդությանը, որը բազում երիտասարդների դժբախտության ու կորստի պատճառ էր դառնում: Ավան-

¹⁹ Նույն տեղում:

²⁰ **Յ. Օշական**, Համապատկեր արեւմտահայ գրականութեան, հ. 10, էջ 110:

²¹ Նույն տեղում:

²² **Հակոբ Օշական**, Երկեր, էջ 66:

²³ **Յակոբ Օշական**, Կայսերական յաղթերգութիւն, էջ 167:

²⁴ Նույն տեղում, էջ 83:

դության համաձայն՝ գեղեցիկ աղջիկները անպայմանորեն գոհ էին գնալու, որովհետև չափազանց գեղեցկությունը աստվածային բան էր, և հասարակ մահկանացուներին վիճակված չէր մրցել աստվածների հետ: Մրան հավատում էին բոլորը՝ ահել թե ջահել, և այնքան կուրորեն, որ նույնիսկ անկախ իրենց կամքից՝ գեղեցկուհի աղջիկների կյանքը ծանր ընթացք ու ողբերգական ավարտ էր ունենում: Նրանք զրկվում էին մանկական խաղերից, պարերից, տոների մասնակցելուց: Ու եթե աղջիկն ամուսնանար, ապա «ժողովրդին հավատքովը» անպայմանորեն մեկ ուրիշի մահվան պատճառ կդառնար. «Եթե ատոնք ծնած ատեն իրենց մայրը գերեզման չեն դրկած, գոնե հարս ըլլալու համար ուրիշ մըն ալ պիտի մեռցնեն»²⁵: Սա այնքան արմատացած ու կարծրացած էր, որ նույնիսկ Օշականն ինքն էլ այդ ամենը համարելով սնահավատություն, այնուամենայնիվ հանգում է այն մտքին, թե «Գեղին իմաստությունը չէր կրնար սխալած ըլլալ»²⁶:

Հարկ է նշել, որ Օշականի հիշատակած բոլոր ավանդությունները տեսական գրականության մեջ համարվում են ավանդագրույցներ: Մարգիս Հարությունյանը ավանդական գրույցների շարքն է դասում բանավոր արձակի տեսակներից ևս մեկը՝ **սնահավատական գրույցները**, որոնք նվիրված էին տարբեր ոգիների և դրանց մասին եղած պատկերացումներին: Դրանցից էին հրեշտակների, սրբերի, տարբեր չար ոգիների (չարունք, սատանա, դև) մասին պատմվող ավանդական գրույցները՝ բոլորն էլ հենված հին ու նոր կրոնական ու ժողովրդական հավատալիքների վրա²⁷: Մանուկ Աբեղյանը գրում է, որ **սնահավատական գրույցները** կապված էին հմայական աղոթքների հետ, և այդ գրույցները պատմողներն ու լսողները հավատում էին դրանց ճշմարտությանն ու իրապես կատարված լինելուն²⁸:

Գյուղում տարածված էր Ավագանի անտառի համբավը, որից ծառ գողացողը կամ նրա տարածքում տավար պտտեցնողը «գարկվում» է ս. Մարգսի կողմից: «Զարկվողները» զրկվում էին խոսելու ունակությունից, իսկ նրանց ծնողները դիմում էին «բուժիչ միջոցների»: Երբ ոչինչ չէր օգնում, հիվանդ տղաներին բուժվելու նպատակով նվիրում էին եկեղեցուն: Դա պարտադիր էր, չէին հարցնում նվիրվողի կարծիքը: Նվիրյալը խստորեն պետք է հետևեր եկեղեցու կարգուկանոնին: Հակառակ դեպքում կործանվելու էին ոչ միայն տղան և նրա ընտանիքը, այլև ողջ գյուղը: Իսկ որ սուրբը վրեժխնդիր էր լինելու, դրանում բոլորն էին համոզված: Կար վերադարձի միայն մեկ միջոց, որն էլ անհնարին էր. «Նվիրված տղան, աղեկնալե վերջ կրնար գնվիլ ժամեն իր ծանրութ-

²⁵ **Հակոբ Օշական**, Երկեր, էջ 235:

²⁶ Նույն տեղում, էջ 246:

²⁷ Տե՛ս **Մարգիս Հարությունյան**, Բանագիտական ակնարկներ, Եր., 2010, էջ 171:

²⁸ Տե՛ս **Մանուկ Աբեղյան**, Երկեր, հ. Ա, Եր., 1966, էջ 37:

յամբը ոսկիի փոխարեն»²⁹ (*«Հորքուր Վարդան», «Կանանչ-կիրակի»*):

Գյուղում կային շատ աղբյուրներ, և ամեն աղբյուր ուներ իր յուրատեսակ անվանումը և խորհուրդը: Գյուղացիների հավատալիքների համաձայն՝ աղբյուրները պատկանում էին ոգիներին և կրում էին համապատասխան անուն: Եվ, հավանաբար, սա է պատճառը, որ Օշականի «հեքիաթներում» դրանք գրվում են բաղադրյալ հատուկ անունների ուղղագրությամբ՝ «Աւետումի Աղբիւր», «Վիճակին Աղբիւր», «Կաղանդին Աղբիւր» և այլն:

Օշականի գյուղը պատկերող գործերը դառնում են մի յուրահատուկ հանդիսարան ոչ միայն մարդկանց, այլև ազգային մտացված, դեռևս նշվող կամ որևէ տեղանքին միայն բնորոշ տոներին ծանոթանալու համար: Այս գործերում նկատվում է նաև հայրենի գյուղաշխարհի հոգևոր մշակույթը փրկելու Օշականի մեծ ձգտումը: Օշականը, լինելով իր գյուղի տոնախմբությունների, ծիսակատարությունների անմիջական մասնակիցը, մեծ վարպետությամբ վերակենդանացրել է դրանք: Ընթերցողը հաղորդակցվում է այն ամենի հետ, ինչը ստեղծել էին հայ գյուղացու վախը, հավատը: Դրանցից են, օրինակ, գյուղի ժամկոչի՝ երկար տարիներով սնդուկներում պահված սուրբ մասունքները: Օշականը մանրամասնորեն բացատրում է այդ նվիրական մասունքների խորհուրդները, դրանց գորությունը: Դրանցով բուժում էին վերքերն ու վնասվածքները: Գոյություն ուներ կաթնատուների կաթը առատացնող և նրանց պաշտպանող ոսկոր, որը կապվում էր հովվի շալին: Մակայն այդ մասունքների մեջ ամենանվիրականը «աղջիկներուն ու երիտասարդ տղոց սիրական մասունքն»³⁰ էր՝ սուրբ զարդերով գեղեցկացրած: Այսպես անցել են դարեր, բայց ասես ոչինչ չի փոխվել այդ մասունքների նկատմամբ գյուղացու վերաբերմունքի մեջ: Իսկ դա վկայում է հայ մարդու անխախտ հավատի մասին, որովհետև լսածն ու տեսածը կրկնել առանց կարդալու՝ կարող է միայն մեծ հավատացյալը (*«Լուսատուն»*):

Օշականի հերոսները նահապետական կյանքով ապրող գյուղացիներ են՝ իրենց աշխարհին բնորոշ հոգեբանությամբ: Նրանք կուրորեն հետևում են ավանդույթներին և սովորույթներին: Այդ սովորույթուններն այնքան արմատացած էին, որ նույնիսկ երկարակյաց մարդը, եթե ուզում էր խախտել այն, չէր համարձակվում՝ «հին օրերու գգուշութիւններէն մնացած սովորութեան մը հնազանդելով»³¹:

Գյուղացիներն ունեին իրենց սիրած տոները: Բոլոր տոների համեմատությամբ մեծ խորհուրդ ուներ Չատիկը: Այդ ժամանակ կախարդիչ էր դառնում բնության և, մանավանդ, աղջիկների ու հարսների գեղեցկությունը, կալերի վրա «անոնց խատուտիկ, չհոգնող» պարը: Իսկ Վարդավառի տոնին մտմտութեան մեջ խեղդված հայ գյուղն աշխու-

²⁹ **Հակոբ Օշական**, Երկեր, էջ 113:

³⁰ **Յակոբ Օշական**, Կայսերական յաղթերգություն, էջ 124:

³¹ **Յակոբ Օշական**, Խոնարհները, էջ 150:

Ժանում էր, կյանքը նոր շունչ էր ստանում (**«Ձատիկ», «Վարդավառ»**):

Օշականը մեկնաբանում է նաև Համբարձման տոնի խորհուրդը: Երեկոյան սկսվում էր ողջ պատրաստությունը: Աղջիկները մեծ ոգևորությամբ իրար էին անցնում: Յուրաքանչյուրը պետք է մասնակցեր կաթի համար նախատեսվող դրամահավաքությանը: Առավոտյան աղջիկները մածնով էին պատում իրենց մարմինը, հետո ծաղկի ջրով լոզանք ընդունում, հավկիթ ուտում, որից հետո վիճակ էին գցում (**«Գոլուն»**):

Աղջիկների ու հարսների սիրած տոներից էր «Կանանչ-կիրակին»: Ապրիլ ամսվա կիրակնամուտին (ստույգ օրը չի նշվում), երբ նշանված աղջիկներն ու նորահարսները պառկում էին քնելու, նրանց գլխավերևում կախված էր լինում կանաչ շավար՝ ալ կարմիր քողով ծածկված: Երբ «Կանանչ-կիրակին լուսնայ», նրանք, մտնելու ձեռքերին ու երգը շուրթերին, պետք է Ավագանի անտառը գնան՝ պտղաբերության ու առատության խորհրդանիշ «Աւետումի աղբիւր»-ի մոտ **Հայ-կանանչը** պարելու և իրենց հագուստից մի մաս ուխտավայրի շյուղերին ամրացնելու: Երգն ու պարն ավարտվում էր հավաքված ծաղիկների թերթիկները ավազանը նետելով: Խումբը երգ ու պարով բռնում էր գյուղի ճամփան (**«Կանանչ-կիրակի»**):

Կաղանդի տոնին մանուկների և պատանիների համար ընդունված կարգ էր ազգականների տուն «ձեռք-պագի երթալը», իսկ մեծահասակների համար «մեռել-տուն» երթալը: Նույն երեկոյան գյուղում մանկանց խմբեր էին պատվում, որոնք, դռների ետևում պահված, ներս էին նետում մի գոտի: Տանտերը գոտին բարիքով էր լցնում, խումբն էլ օրհնելով ու երգելով հեռանում էր (**«Տոգասնը»**):

Որպես ամփոփում կարող ենք ասել, որ Օշականը լավ էր ճանաչում իր ժողովրդին, նրա ծեսերը, ավանդույթներն ու սովորույթները: Նույնիսկ բնության գեղեցկությունները նկարագրելիս Օշականը գուրդական պատկերները լրացնում է մարդկանց բարքերի ու կենցաղի նկարագրությամբ: Գյուղի կյանքի ու կենցաղի նկարագրություններում կոլորիտը պահպանելու և խոսքը համեմելու նպատակով Օշականը օգտագործում է իրենց գյուղի խոսակցական ոճերը, ժողովրդական առած-ասացվածքները, ինչպես, օրինակ, «Չէ՛, սա ուտելիք ապուր չէ», «Բայց ճնճդուկն ալ կապրի ոտքը բարակ», «Շատ ուզողին քիչ անգամ պիտի տրուի», «Տարի ըսածդ ի՛նչ է որ, աչքդ խփես, կանցմի» և այլն:

Մի խոսքով՝ Հակոբ Օշականի վաղ մանկության, պատանեկության և երիտասարդության տարիների ժողովրդագիտությունը դրսևորվեց նրա արձակում, որտեղ պատկերները քարացած չեն. դրանք և՛ նկարագրություններ են, և՛ հոգեվիճակի արտահայտություն, և՛ պուժեի ընթացք:

Բանալի բառեր – փոքր արձակ, գյուղաշխարհ, տոներ, սովորույթներ, կենցաղ, վարք ու բարք

МАРИНЕ КАЗАРЯН – *Малая проза Ошакана: панорама нравов и обычаев.* – Акоп Ошакан в своих рассказах, «сказках» и «тяжёлых романах» спас от забвения свою малую родину – армянское село. Село с присущими ему жизнью, нравами, психологическим и нравственным климатом стало стержнем его прозы. Запечатлеть село в слове, увековечить его духовную культуру было целью писателя.

Проза Ошакана являет собой панораму быта и обычаев, праздников и обрядов патриархального села, но в сочетании с алогичными подчас портретами героев. Не будь этого, писатель остался бы в литературе лишь этнографом. Даже живописуя красоты природы, Ошакан оттенял и углублял эти картины человеческими характерами и бытом. Стремясь отразить деревенский колорит, писатель широко пользовался разговорным стилем, уснащал речь персонажей пословицами и поговорками.

Ключевые слова: *малая проза, сельский мир, праздники, обычаи, быт, нравы*

MARINE GHAZARIAN – *The Small Prose of Oshakan: Panorama of Manners and Customs.* – Hakob Oshakan with his stories, "tales" and "serious novels" primarily saved from forgetting his place of birth - Armenian village. Armenian village with its life, behavior and manners, psychological and moral world has become the axis of Oshakan's literature. The purpose of Oshakan is the description of the rural world and its people, revealing the manners of this world. This was one of the important tasks in the system of his aesthetic views. Each story of Oshakan with its unique and colorful accent became a unified vivid picture of the Armenian rural nature, customs and manners, and their combination – a panorama of the village.

The prose of Oshakan is a panorama of the life, festivals and rituals, manners and customs of a patriarchal Armenian village. Oshakan shows all this not only by descriptions but also with the promptness of mental discovery of heroes. Otherwise, he would be considered as an eco-collector and ethnographer.

Oshakan's works, which describe the village, become a special triumph not only for people but also for exploring the national forgotten, even celebrated, or typical of some areas holidays. In these works, it can be seen also Oshakan's great desire of salvation of the spiritual culture of his native village. Even in the description of the beauty of nature Oshakan fills the rural pictures with the description of manners and life of people. Oshakan uses a conversational style, folk proverbs, and sayings to preserve the color in the descriptions of rural life.

Key words: *small prose, the world of the village, holidays, customs, lifestyle, mode of life*